



ՄԻԿՐՈ ԵՎ ՓՈՔՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՎԱՐԿԵՐԻ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓՈԳԻՐ

Ուժի մեջ է՝ 29.10.2018թ.-ից:

Ներկայացված պայմանները կարող են փոփոխված լինել, մանրամասներին կարող եք ծանոթանալ Բանկի [մասնաճյուղերում](http://www.artsakhbank.am) և պաշտոնական կայքում՝ www.artsakhbank.am հասցեով «Բիզնես ֆինանսավորում» բաժնում:

Հեռ.՝ +374 47 943334, +374 60 747779

Վարկառուի նկարագիր	ՀՀ և ԱՀ ռեզիդենտ անհատ ձեռնարկատեր, իրավաբանական անձ, գյուղատնտեսական գործունեություն ծավալող ֆիզիկական անձ			
Վարկի նպատակ	Ձեռնարկատիրական կամ գյուղատնտեսական գործունեություն և/կամ դրա հետ կապված գործառնություններ իրականացնելու նպատակով			
Վարկի նվազագույն սահման	Սահմանված չէ			
Վարկի առավելագույն սահման	20.000.000 ՀՀ դրամ կամ համարժեք ԱՄՆ դոլար			
Առաջարկվող վարկային գործիքներ	<ul style="list-style-type: none"> ▪ Վարկ ▪ Վարկային գիծ ▪ Օվերդրաֆտ ▪ Համակցված օվերդրաֆտ ▪ Բանկային երաշխիք ▪ Ֆակտորինգ ▪ Առևտրային հիփոթեք 			
Վարկի առավելագույն ժամկետ	<p>Առավելագույնը՝ 7 տարի ժամկետով՝ հիմնական միջոցների ձեռքբերման և վերանորոգման, արտադրական հզորությունների վերագինման, այգիների և ջերմոցների հիմնադրման, և այլ նման երկարաժամկետ կապիտալ ներդրումների համար</p> <p>Առավելագույնը 10 տարի ժամկետով՝ առևտրային հիփոթեքի դեպքում</p> <p>Առավելագույնը 5 տարի ժամկետով՝ շրջանառու միջոցների, ապրանքանյութական պաշարների ընդլայնման, պարարտանյութի, սերմերի, մատղաշ անասունների և թռչունների ձեռքբերման համար</p>			
Ֆինանսավորումը վարկային գծի տեսքով իրականացնելու դեպքում՝ առավելագույն ժամկետ՝ 5 տարի				
Վարկի արժույթ	Բանկը ֆինանսավորումն իրականացնում է ՀՀ դրամով և արտարժույթով: Ֆինանսավորման արժույթը կախված է Հաճախորդի գործունեության բնույթից և ֆինանսավորման նպատակից:			
Մայր գումարի և տոկոսագումարների մարումների հաճախականություն	Վարկային պարտավորություններն ենթակա են մարման պարբերական վճարումներով, որպես կանոն՝ ամսական մարումներով: Վարկային պարտավորությունների մարումների եղանակն ու ժամանակացույցը սահմանվում է՝ հաշվի առնելով վարկառուի բիզնես ցիկլը, դրամական հոսքերի պարբերականությունը և վարկի նպատակայնությունը: Ելնելով վարկառուի բիզնեսի առանձնահատկություններից կարող է սահմանվել վարկի մայր գումարի և/կամ տոկոսագումարի մարման արտոնյալ ժամկետ:			
Ֆինանսավորման արժույթ և տոկոսադրույքներ				
Ֆինանսավորման տեսակ	ՀՀ դրամ		ԱՄՆ դոլար	
Միկրո և փոքր առևտրային ֆինանսավորում	նվազագույնը	14%	նվազագույնը	12%
	առավելագույնը	18%	առավելագույնը	16%
ԼՂՀ Գյուղի և գյուղատնտեսության աջակցության ծրագրի շրջանակներում		17%		15%
«ՓՄՁ պետական աջակցության ծրագրի» շրջանակներում	նվազագույնը	15%	նվազագույնը	12%
	առավելագույնը	18%	առավելագույնը	16%
ԳՖԿ-ԾԻԳ ՊՀ ծրագրերի շրջանակներում ֆինանսավորում	նվազագույնը	14%	նվազագույնը	10%
Վարկային գծերի չօգտագործված սահմանաչափի նվազագույն ուղեցույցային տոկոսադրույքը սահմանվում է 3.0%:				

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ: ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ՎԱՐԿԸ ԶԵՁ ՀԱՄԱՐ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԶԱՓԵՐՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ:

<p>Փաստացի տոկոսադրույքի հաշվարկման կարգ</p>	<p>Տոկոսադրույքը կիրառվում է վարկի նվազող մնացորդի նկատմամբ՝ տարին ընդունելով 365/366 օր:</p> <p>Տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով հետևյալ բանաձևը.</p> $A = \sum_{n=1}^N \frac{K_n}{(1+i)^{\frac{D_n}{365}}}$ <p>որտեղ՝ <i>i</i> - տարեկան փաստացի տոկոսադրույքը (APR). <i>A</i> - կրեդիտի գումարը (կրեդիտավորողի կողմից սպառողին տրամադրված կրեդիտի սկզբնական գումարը). <i>n</i> - կրեդիտի մարմանն ուղղված վճարի թիվը. <i>N</i> - կրեդիտի մարմանն ուղղված վերջին վճարի թիվը. <i>K_n</i>-կրեդիտի մարմանն ուղղված <i>n</i>-րդ վճարի գումարը. <i>D_n</i> -կրեդիտի տրամադրման օրից մինչև կրեդիտի մարմանն ուղղված <i>n</i>-րդ վճարի կատարման օրն ընկած ժամանակահատվածը՝ արտահայտված օրերի թվով. <i>i</i> -ն՝ տարեկան փաստացի տոկոսադրույքը, կարող է հաշվարկվել, եթե հավասարման մյուս տվյալները հայտնի են կրեդիտավորման պայմանագրից կամ այլ կերպ:</p>
---	---

<p>Տոկոսագումարների հաշվարկի ներկայացուցչական օրինակ</p>	<p>Վարկի սկզբնական գումար</p>	<p>3.000.000 ՀՀ դրամ</p>
	<p>Վարկի ժամկետ</p>	<p>60 ամիս</p>
	<p>Տարեկան տոկոսադրույք</p>	<p>14%</p>
	<p><i>Օրական հաշվեգրվող տոկոսագումարը կկազմի 3.000.000*14/100/365=1.150,68 ՀՀ դրամ</i></p>	

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ և ՇՈՒԿԱՅՈՒՄ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԲԱՆԿԸ ԿԱՐՈՂ Է ՓՈՓՈԽԵԼ ՎԱՐԿԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԱՐՏԱՐԺՈՒՅԹՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՎԱՐԿԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ՝ ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ՓՈԽԱՐԺԵՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱԼ ՎԱՐԿԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԻ ՎՐԱ:

<p>Ապահովության միջոց (գրավ)</p>	<p>Բանկի նկատմամբ հաճախորդների կողմից ստանձնած վարկային պարտավորությունների կատարման համար որպես գրավի առարկա կարող են հանդիսանալ երաշխավորություններ, ցանկացած գույք կամ գույքային իրավունք (պահանջ), որի գրավադրումն արգելված չէ գործող օրենսդրությամբ:</p>
---	---

Ապահովության տեսակ, վարկավորման գումար/ապահովության արժեք հարաբերակցության առավելագույն գործակիցներ

<p>Ապահովություն</p>	<p>Վարկ</p>
<p>Երաշխավորություն</p>	<p>Վարկավորման գործընթացում երաշխավորությունները դիտվում են որպես լրացուցիչ ապահովության միջոց</p>
<p>Սրբփանակերտ, Շուշի, Երևան քաղաքներում գտնվող անշարժ գույքեր</p>	<p>Գրավի լիկվիդային արժեքի մինչև 80%</p>
<p>Սրբփանակերտ և Երևան քաղաքներին հարակից տարածքներում՝ մինչև 10 կմ ուղիղ գծով գտնվող անշարժ գույքեր, ինչպես նաև այն շրջկենտրոններում և քաղաքներում, որտեղ Բանկն ունի մասնաճյուղեր</p>	<p>Գրավի լիկվիդային արժեքի մինչև 60%</p>
<p>Այլ վայրերում գտնվող անշարժ գույքեր, եթե դրանք գրավադրվում են ի լրումն ք.Երևանում, Սրբփանակերտում կամ Շուշիում գտնվող գրավադրվող այն անշարժ գույքերի, որոնց շուկայական արժեքն առնվազն հավասար է տրամադրվող վարկի գումարին՝ 1 տարի և ավելի ժամկետով վարկերի դեպքում</p>	<p>Գրավի լիկվիդային արժեքի մինչև 50%</p>

Այլ վայրերում գտնվող անշարժ գույքեր, եթե դրանք գրավադրվում են ի լրումն ք.երևանում, Ստեփանակերպում կամ Շուշիում գտնվող գրավադրվող այն անշարժ գույքերի, որոնց շուկայական արժեքը առնվազն հավասար է փրամադրվող վարկի 80%-ին՝ մինչև 1 փարի ժամկետով վարկերի դեպքում	Գրավի լիկվիդային արժեքի մինչև 60%
Արտադրական նշանակության անշարժ գույքեր	Գրավի լիկվիդային արժեքի մինչև 70%
Ոչ բնակելի անշարժ գույքի ձեռքբերման դեպքում վարկավորման գումար/ապահովության արժեք հարաբերակցության առավելագույն գործակիցը կազմում է ձեռքբերվող գույքի լիկվիդային արժեքի մինչև 90%:	
Հաճախորդի վարկավորման համախառն չափը 3.000.000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթը չգերազանցելու դեպքում հնարավոր է վարկն ապահովված լինի միայն երաշխավորություններով, ընդ որում, նախընտրելի է, որ երաշխավորներից երկուսը չունենան Հաճախորդի հետ ընդհանուր փոխհարցերի և ունենան կայուն եկամտի աղբյուր:	
Տրանսպորտային միջոցներ	Գրավի լիկվիդային արժեքի մինչև 60%
Սարքավորումներ	Գրավի լիկվիդային արժեքի մինչև 50%
Շինարարական և գյուղատնտեսական տեխնիկա	Գրավի լիկվիդային արժեքի մինչև 65%
Ամբողջությամբ նույն արժույթով արտահայտված դրամական միջոցներ, բյուջեփայտի երաշխիք	գրավի արժեքի/երաշխիքի գումարի մինչև 100%
Այլ երաշխիքներ	Երաշխիքի գումարի մինչև 80%
Այլ արժույթներով արտահայտված դրամական միջոցներ, ոսկու ստանդարտացված ձուլակտորներ, պեպերական պարտավորումներ ¹	գրավի արժեքի մինչև 95%
Ապրանքանյութական արժեքներ	գնահատված արժեքի մինչև 40%
Պեպերական արժեթղթեր, այլ բարձր իրացվելի ակտիվներ ¹	գրավի արժեքի մինչև 90%
Կորպորատիվ արժեթղթեր ¹	գնահատված արժեքի մինչև 60%
Թանկարժեք մեքանիզմներ	Եթե վարկի մարումներն անուիտետային են և վարկի ժամկետը չի գերազանցում 24 ամիսը՝ գրավի արժեքի մինչև 95%: Այլ դեպքերում՝ գրավի արժեքի մինչև 80%
Հաճախորդի վարկանիշի և/կամ շուկայում զբաղեցրած դիրքի հիման վրա վարկավորում	Եթե ընթացիկ ակտիվները կազմում են ընդհանուր ակտիվների առնվազն 40%-ը, ապա հաճախորդի, դիտարկման պահին, ակտիվների 70% Այլ դեպքերում՝ առավելագույնը ընթացիկ ակտիվների չափով:

¹ Յուրաքանչյուր գործարք անհրաժեշտ է համաձայնեցնել Գլխավոր գանձապետի և Բանկի ռիսկերի կառավարման ստորաբաժանման հետ

Այլ դեպքեր²

գնահատված անուղղակի եկամուտների կամ Երաշխավորի եկամուտների 35%

ՄԻՋՆՈՐԴԱՎՃԱՐՆԵՐ

Միկրո և փոքր բիզնես վարկավորում ^{3 4}	Հայրի ուսումնասիրության վճար	Վարկի տրամադրման վճար (մասնաբաժինների դեպքում, յուրաքանչյուր մասնաբաժնի համար) ⁵	Վարկային միջոցների կանխիկացում	
Մինչև 3 մլն ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթով առանց գույքի գրավի վարկավորում	5.000 ՀՀ դրամ	3.0%,	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար
Մինչև 2 մլն ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթով գյուղատնտեսական նպատակներով վարկավորում	5.000 ՀՀ դրամ	2.0%	0.3%	0.5%
Այլ միկրո վարկավորում	5.000 ՀՀ դրամ	0.7%, նվազագույնը 10.000 ՀՀ դրամ	0.3%	0.5%
Փոքր վարկավորում	10.000 ՀՀ դրամ	0.5%, նվազագույնը 30.000 ՀՀ դրամ ⁵	0.3%	0.5%
Հաճախորդի այլ ծախսեր	1) Գրավի գնահատման ծախս՝ իրականացվում է Բանկի հետ համագործակցող գնահատող ընկերության կողմից սահմանված սակագներին համապատասխան 2) Ա/ՀՀ անշարժ գույքի կադաստրի կողմից տրամադրվող միասնական տեղեկանքի համար սահմանված վճար՝ 10.000 ՀՀ դրամ 3) Գրավի առարկա հանդիսացող անշարժ գույքի նոտարական վավերացման վճար՝ 2.000-25.000 ՀՀ դրամ 4) Գրավի պետական գրանցման վճար՝ 26.000-30.000 ՀՀ դրամ 5) Ոստիկանությունից տրանսպորտային միջոցի սահմանափակումների վերաբերյալ տեղեկանքի վճար՝ 3.000 ՀՀ դրամ 6) Անշարժ գույքի նկատմամբ սահմանափակումների վերաբերյալ տեղեկանք կադաստրից՝ 1.000 ՀՀ դրամ			
Վարկի պայմանների վերանայման վճար (վերանայվող պարտավորության չափի նկատմամբ)				
Միկրո վարկավորում	1.5%, նվազագույնը 20.000 ՀՀ դրամ			
Փոքր վարկավորում	0.75%, նվազագույնը 50.000 ՀՀ դրամ			
Գործառնական սակագներ (ներառյալ ԱԱՀ)				
Գրավի առարկայի ֆիզիկական բնութագրի վերաբերյալ փոփոխությունների համաձայնության տրամադրում, եթե այդ	10.000 ՀՀ դրամ			

² Եկամուտներում կարող են հաշվի առնվեն նաև Հաճախորդի հաշվեկշռում հաշվառվող դեբիտորական պարտքերը, ինչպես նաև սպասվող ֆինանսական հոսքերը (յուրաքանչյուր գործարք անհրաժեշտ է համաձայնեցնել Բանկի հետ:

³ Ֆինանսավորման ձևը որոշվում է Բանկի կողմից:

⁴ Վարկային գծի սահմանաչափերի տրամադրման դեպքում հայտի ուսումնասիրության և վարկի տրամադրման վճարները կիրառվում են վարկային գծի սահմանաչափի նկատմամբ:

⁵ Այլ բանկերից վարկերի տեղափոխման դեպքում նվազագույն գումարի պահանջը կարող է չպահպանվել:

փոփոխությունները չեզոք են կամ կբերեն գրավի առարկայի գնի բարձրացման	
Սեփականության վկայականի փոփոխություն, եթե փոփոխությունը կապված է հասցեի, սեփականատիրոջ տվյալների, Բանկի համար ռիսկ չչարունակող այլ հանգամանքների հետ	5.000 ՀՀ դրամ
Գրավի առարկայի փոխարինում առաջնակարգ գրավով, ֆիզիկական ոչնչացման դեպքում՝ այլ գրավով	0 ՀՀ դրամ
Այլ դեպքերում՝ գրավադրված գույքի՝ <ul style="list-style-type: none"> Մեկ այլ գույքով փոխարինում (գրավադրում), Օտարման թույլտվության տրամադրում, Գրավից ազատում (եթե վարկն ամբողջությամբ մարված չէ), Սեփականության վկայականի փոփոխման համաձայնության տրամադրում, Վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնելու համաձայնության տրամադրում 	20.000 ՀՀ դրամ
Տրամադրված վարկերի շրջանակներում համասեփականատերերի ներգրավման համաձայնության տրամադրում	25.000 ՀՀ դրամ
Գրավի առարկայի հաջորդող գրավի սկզբունքով գրավադրման համաձայնության տրամադրում	0 ՀՀ դրամ
Գրավադրված ավտոմեքենայի պետհամարանիշների փոփոխման համաձայնության տրամադրում	10.000 ՀՀ դրամ

Պայմանագրով սահմանված վճարման ժամկետների խախտման դեպքում կիրառվող տուժանքներ	
Վարկի գումարը չվճարելու դեպքում տուժանքի չափ	Ժամկետանց վարկի գծով՝ տարեկան 36.0%-ի չափով՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար
Վարկի տոկոսագումարը չվճարելու դեպքում տուժանքի չափ	Ժամկետանց տոկոսի գծով՝ տարեկան 12.0%-ի չափով՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար

ԶԳՈՒՇԱՅՈՒՄ	<i>Ձեր ԳՈՒՅՔԸ ԿԱՐՈՂ Է ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԲՈՆԱԳԱՆՁՎԵԼ, ԵԹԵ ԴՈՒՔ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉԿԱՏԱՐԵՔ ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՍՏԱՆՁՆԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԸ:</i>
	<i>Ձեր ԿՈՂՄԻՑ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԸ ԺԱՄԿԵՏԻՆ ՉՎՃԱՐՎԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ, ՁԵՐ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԿԳՐԱՆՑՎԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐՈՒՄ:</i>
	<i>Ձեր ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԿԱՏԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ, ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԳՐԱՎԻ ՀԱՇՎԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ, ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԾԱԾԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՐԱՎԸ ԲԱՎԱՐԱՐ ՉԼԻՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ, ՁԵՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ՄԱՐԿԵԼ, ՁԵՐ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՅԼ ԳՈՒՅՔԻ ՀԱՇՎԻՆ:</i>

Վարկի տրամադրման եղանակ	միանվագ կամ փուլերով՝ կախված օգտագործման նպատակից, անկանխիկ եղանակով
Վարկի վաղաժամկետ մարում	Վարկի վաղաժամկետ մարման դեպքում տույժեր չեն կիրառվում:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ՓՈԽԱՐԺԵՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ԱՁԴԵՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱԼ ՎԱՐԿԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԻ ՎՐԱ:

Պահանջներ վարկառուների նկատմամբ

Բանկը վարկավորում է ինչպես փորձառու ձեռնարկատիրական գործունեություն ծավալող հաճախորդներին (Բանկին վարկավորման հայտ ներկայացնելու պահին ունի առնվազն վեց ամսվա գործունեության փորձ), այնպես էլ սկսնակներին: Բանկն իր կողմից սահմանված ընդհանուր պայմաններով վարկավորում է այն Հաճախորդներին, որոնք Բանկ ղիմելու պահին չունեն հարկային և վարկային ժամկետանց պարտավորություններ, ինչպես նաև նախորդ մեկ տարվա ընթացքում ֆինանսական համակարգում չեն ունեցել հանրագումարային առավելագույնը 90 օրը գերազանցող ժամկետանց պարտավորություններ: Տվյալ պայմաններից շեղումները, Բանկի

տեսանկյունից հիմնավորված լինելու դեպքում, հայտը կարող է սահմանված կարգով ընթացքավորվել:

Վարկի տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ

1) Առևտրային վարկավորման տրամադրման վերաբերյալ դիմում՝ ներառյալ վարկավորման նպատակը, ծախսման ուղղությունները և գումարները (անհրաժեշտության դեպքում՝ Դիմումում գետեղված տեղեկատվության վերաբերյալ հնարավոր է պահանջվեն հիմնավորող փաստաթղթեր (լրացվում է Բանկում):

2) Տնտեսվարող սուբյեկտի Ընդհանուր ժողովի կամ միակ մասնակցի որոշման արձանագրությունից քաղվածք՝ Վարկը ստանալու և/կամ գրավադրվող գույքի վերաբերյալ (գույքը տվյալ տնտեսվարող սուբյեկտին սեփականության իրավունքով պատկանելու դեպքում):

3) Իրավաբանական անձի Կանոնադրության պատճենը, անհատ ձեռնարկատիրոջ և ֆիզիկական անձի դեպքում՝ անձը հաստատող փաստաթղթի պատճենը, սոցիալական քարտ/հանրային ծառայության համարանիշ/հանրային ծառայության համարանիշ չունենալու մասին տեղեկանք:

4) ՀՀ/ԱՀ պետական ռեգիստրի համապատասխան մարմնի կողմից՝ Հաճախորդի պետական գրանցումը հավաստող միասնական պետական գրանցամատյանից տրված քաղվածք (կամ պետական ռեգիստրի վկայականի ներդիր և ՀՎՀՀ):

5) Հիմնադիրների, տնօրենի անձնագրերի պատճեններ:

6) ՀՀ/ԱՀ պետական ռեգիստրից և/կամ դեպոզիտարիայից (բաժնետիրական ընկերության դեպքում) տեղեկանքներ/քաղվածքներ բաժնետերերի/մասնակիցների կազմի, տնօրենի և կանոնադրության վերջին փոփոխությունների վերաբերյալ, եթե չի իրականացվում էլեկտրոնային հարցում:

7) Տեղեկանք՝ հարկային պարտավորությունների վերաբերյալ:

8) Գործունեության ծավալման վայրի նկատմամբ իրավունքը հաստատող փաստաթուղթ կամ տեղազնման արձանագրություն՝ գործունեության ծավալման վայրի վերաբերյալ ֆիզիկական անձի դեպքում՝ նաև տեղեկանք բնակության վայրից:

9) Արտոնագրեր/լիցենզիաներ՝ արտոնագրված/լիցենզավորված գործունեության դեպքում:

10) Որպես գրավ առաջարկվող միջոցների (անշարժ գույք, հիմնական միջոցներ, շարժական գույք, ապրանքանյութական արժեքներ և այլն) սեփականատեր հանդիսանալու հիմքեր (առք ու վաճառքի պայմանագիր և այլն) և սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթեր (սեփականության վկայականներ, իսկ ավտոմեքենաների և սարքավորումների դեպքում՝ տեխնիկական անձնագրերի բնօրինակներ, որոնք պատճենահանելուց (թվայնացնելուց) հետո վերադարձվում են հաճախորդին):

11) Առաջարկվող գրավի գնահատման/վերագնահատման ակտ/հաշվետվություն կամ արժեքի որոշման հիմք:

12) Երաշխավորի կողմից ստորագրված՝ երաշխավորությունը ստանձնելու հավաստագիր:

13) Անհատ ձեռնարկատեր և ֆիզիկական անձ վարկառուների դեպքում (գյուղատնտեսական ֆինանսավորման նպատակով)՝ բնակության վայրից տեղեկանք ընտանիքի կազմի մասին:

14) Գույքահարկի գծով պարտավորությունների վերաբերյալ տեղեկանք՝ ոչ բնակելի անշարժ գույքի գրավադրման դեպքում:

15) Անշարժ/շարժական գույքի նկատմամբ սահմանափակումների վերաբերյալ տեղեկանք՝ անշարժ/շարժական գույքի գրավով ապահովված վարկերի տրամադրման դեպքերում:

16) Ֆիզիկական անձ գրավատուների անձը հաստատող փաստաթղթերի պատճեններ, ամուսնության վկայականի պատճեն կամ ամուսնության մեջ գտնվելու կամ չգտնվելու վերաբերյալ համապատասխան տեղեկանք ՔԿԱԳ-ից, իսկ վերջինիս ներկայացման անհնարինության դեպքում փաթեթում ապահովել գույքը ձեռք բերելու պահին ամուսնության մեջ գտնվելու մասին նոտարական գրասենյակում տրված հայտարարություն Ֆիզիկական անձ երաշխավորների դեպքում՝ անձը հաստատող փաստաթղթերի պատճեններ, սոցիալական քարտ/հանրային ծառայության համարանիշ/հանրային ծառայության համարանիշ չունենալու մասին տեղեկանք:

Այլ փաստաթղթեր/տեղեկանքներ, որոնք անհրաժեշտ են ֆինանսական վերլուծության, որոշումների կայացման, վարկավորման հաստատման, կնքվող պայմանագրերի վավերականության ստուգման և վավերացման համար:

Բանկի կողմից վարկային հայտի վերաբերյալ որոշման կայացման առավելագույն ժամկետ

Վարկային հայտի վերաբերյալ որոշման կայացման առավելագույն ժամկետ 15 աշխատանքային օր՝ բոլոր պահանջվող փաստաթղթերի և տեղեկությունների ներկայացումից հետո:

Վարկավորման հայտը հաստատվելու/մերժվելու դեպքում հաճախորդին տեղեկացնելու ժամկետ՝ 2 աշխատանքային օր:

Վարկի տրամադրման դրական որոշման գործոններ

- Բանկն իր կողմից սահմանված ընդհանուր պայմաններով վարկավորում է այն Հաճախորդներին, որոնք Բանկի դիմելու պահին չունեն հարկային և վարկային ժամկետանց պարտավորություններ, ինչպես նաև նախորդ մեկ տարվա ընթացքում ֆինանսական համակարգում չեն ունեցել ընդհանուր՝ առավելագույնը 90 օրը գերազանցող ժամկետանց պարտավորություններ: Նշված պահանջից շեղումը Բանկի տեսանկյունից հիմնավորված լինելու դեպքում, հայտը կարող է սահմանված կարգով ընթացքավորվել.
- Բանկին հստակ հայտնի է վարկի օգտագործման նպատակայնությունը.
- առկա են վարկը մարելու համար բավարար եկամուտներ.
- վարկավորման համար անհրաժեշտ և արժանահավատ/լիարժեք փաստաթղթերի առկայություն.
- վարկային պատմության համապատասխանում Բանկի կողմից վարկավորման պահանջներին.

	<ul style="list-style-type: none"> բավարար գրավի առկայություն:
Վարկի մերժման գործոններ	<ul style="list-style-type: none"> Հաճախորդի ֆինանսական վերլուծության արդյունքները չեն համապատասխանում վարկավորման համար անհրաժեշտ պահանջներին. առկա է ներկայացված փաստաթղթերի անարժանահավատության կասկած կամ փաստ, կամ դրանք թերի են ներկայացվել. Հաճախորդն ունի բացասական վարկային պատմություն. առաջարկվող գրավն անբավարար է. առկա են վարկի օգտագործման նպատակայնության վերաբերյալ կասկածներ. առկա են այլ հիմնավոր պատճառներ:
Վարկի ձևակերման վայր	Ստեփանակերտի կենտրոնական մասնաճյուղ (Կնունյանցների փող.25), ԱՀ և ՀՀ տարածքում ոչ սահմանափակ գործառույթներ իրականացնող մասնաճյուղեր
Լրացուցիչ տեղեկություններ	
<p>Վարկերի պայմաններով կամ Վարկը հաստատող լիազոր մարմնի որոշմամբ, ելնելով վարկային գործիքի կամ դրա վերադարձելիությունն ապահովող գրավի ռիսկայնությունից, կարող է պահանջվել ապահովագրություն: Ապահովագրության դեպքում որպես շահառու հանդիսանում է Բանկը:</p> <p>Գրավ ընդունվող տրանսպորտային միջոցները, մասնավորապես, տաքսի, հասարակական տրանսպորտ, կամ բեռնափոխադրող մեքենաներ (բացառություն կարող են կազմել գյուղատնտեսությունում կամ շինարարությունում օգտագործվող մեքենաները) պարտադիր ապահովագրվում են, բացառությամբ եթե գույքը գրավադրվում է ի հավելումն Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված չափանիշներին համապատասխանող վարկավորման ապահովության միջոցների:</p> <p>Ապահովագրության պահանջի դեպքում ապահովագրվող գույքը ենթակա է ապահովագրման գույքի շուկայական և «վարկ գումարած չփոխհատուցվող գումար» արժեքներից նվազագույնի չափով, եթե շուկայական արժեքը բարձր է «վարկ գումարած չփոխհատուցվող գումարի» արժեքից, հակառակ դեպքում հաշվի է առնվում գույքի շուկայական և «վարկ գումարած չփոխհատուցվող գումար» արժեքներից առավելագույն արժեքը, բացառությամբ Ծրագրային վարկերի ֆինանսավորման կառույցների հետ համագործակցության շրջանակներում տրամադրվող վարկերի, որոնց պայմանները սահմանվում են վերջիններիս և Բանկի միջև կնքված համագործակցության պայմանագրերով:</p>	